



Համարը N 1136-Ն

Տեսակը Պաշտոնական
Ինկորպորացիա

Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2006.08.30/46(501)
Հոդ.984

Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 30.08.2011

Ընդունման ամսաթիվը 10.08.2006
Ստորագրման ամսաթիվը 17.08.2006
Վավերացման ամսաթիվը 21.08.2006
Ուժը կորցնելու ամսաթիվը

☐ Օանուցում

06.08.09 N 910-Ն որոշման 1-ին կետի փոփոխության համաձայն սույն որոշման ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 5 տարի հետո:

☒ Կապեր այլ փաստաթղթերի հետ

☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՑԵՄԵՆՏԵՐԻՆ, ՑԵՄԵՆՏԱՅԻՆ ԿԼԻՆԿԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում էմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
21 օգոստոսի 2006 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 օգոստոսի 2006 թվականի N 1136-Ն

ՑԵՄԵՆՏԵՐԻՆ, ՑԵՄԵՆՏԱՅԻՆ ԿԼԻՆԿԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(վերնագիրը փոփ. 03.06.21 N 902-Ն, 18.05.23 N 771-Ն)

«Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի պահանջների կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

(նախարանը փոփ., լրաց. 03.06.21 N 902-Ն)

1. Հաստատել ցեմենտերին, ցեմենտային կլինկերին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

(1-ին կետը փոփ. 03.06.21 N 902-Ն, 18.05.23 N 771-Ն)

2. Սույն որոշման ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 5 տարի հետո:

(2-րդ կետը փոփ. 06.08.09 N 910-Ն)

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

2006 թ. օգոստոսի 17
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2006 թվականի
օգոստոսի 10-ի N 1136-Ն որոշման

Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Բ Գ

**ՑԵՄԵՆՏՆԵՐԻՆ, ՑԵՄԵՆՏԱՅԻՆ ԿԼԻՆԿԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ
(վերնագիրը փոփ. 03.06.21 N 902-Ն, 18.05.23 N 771-Ն)**

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Ցեմենտերին, ցեմենտային կլինկերին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ) գործողությունը տարածվում է հետևյալ արտաքին տնտեսական գործունեության սպասարկային ծածկագրերից պորտլանդցեմենտի, կավահողային ցեմենտի, խարամային ցեմենտի, սուպերսուլֆատային և նույնանման հիդրավիկ ցեմենտների, չներկած կամ ներկած, պատրաստի կամ թրծած բովախառնուրդների (կլինկերների) վրա (այսուհետ՝ ցեմենտներ, ցեմենտային կլինկեր)

1.	2523 10 000 0	կլինկերային ցեմենտ
2.	2523 21 000 0	պորտլանդցեմենտ՝ սպիտակ ցեմենտ, արհեստականորեն ներկված կամ չներկված
3.	2523 29 000 0	այլ
4.	2523 30 000 0	կավահողային ցեմենտ
5.	2523 90 000 0	այլ հիդրավիկ ցեմենտներ

(1-ին կետը փոփ., լրաց. 03.06.21 N 902-Ն, խմբ. 18.05.23 N 771-Ն)

2. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում են ցեմենտների, ցեմենտային կլինկերի անվտանգությունը բնութագրող ցուցանիշները, դրանց մակնշմանը, փաթեթավորմանը, փոխադրմանը, պահմանը ներկայացվող պահանջները, ինչպես նաև համապատասխանության գնահատման ընթացակարգերը:

(2-րդ կետը փոփ. 02.04.15 N 356-Ն, 03.06.21 N 902-Ն, 18.05.23 N 771-Ն)

3. Ցեմենտները, ցեմենտային կլինկերը ենթակա են համապատասխանության պարտադիր գնահատման:
(3-րդ կետը փոփ. 02.04.15 N 356-Ն, 03.06.21 N 902-Ն, 18.05.23 N 771-Ն)

II. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Սույն տեխնիկական կանոնակարգում կիրառված են հետևյալ հասկացությունները՝
ցեմենտ՝ փոշենման շինարարական կապակցող նյութ, որին բնորոշ են հիդրավիկական հատկանիշներ՝ բաղկացած կլինկերից, գիպսից կամ դրա ածանցյալներից և անհրաժեշտության դեպքում հավելույթներից,

համաշինարարական ցեմենտ՝ ցեմենտ, որին ներկայացվող հիմնական պահանջը բետոնների կամ շաղախների ամրության և երկարակյացության ապահովումն է,

հայտատու՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով գրանցված իրավաբանական անձ կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձ կամ Հայաստանի Հանրապետությունում նրանց լիազոր ներկայացուցիչը կամ Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետության տարածքում օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ցեմենտ արտադրող իրավաբանական անձ, որը սույն տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի համապատասխանության հավաստման նպատակով դիմում է համապատասխանության գնահատման մարմնին,

ցեմենտի նյութական կազմ՝ ցեմենտում հիմնական բաղադրամասերի պարունակությունը, արտահայտված տոկոսներով ցեմենտի զանգվածից,

ցեմենտի հիմնական բաղադրամասեր՝ կլինկերը, գիպսը կամ դրա ածանցյալները, ինչպես նաև հանքային հավելույթները, որոնց զանգվածային մասը ցեմենտում կազմում է 5 %-ից ավելին,

ցեմենտի օժանդակ բաղադրամասեր՝ հանքային հավելույթներ, որոնց զանգվածային մասը ցեմենտում կազմում է 5 %-ից ոչ ավելին,

պորտլանդցեմենտ՝ ցեմենտ, որն ստացվել է ցեմենտային կլինկերի հիմքի վրա,

ցեմենտի ամրության դաս՝ ցեմենտի դասը՝ ըստ սեղմման ամրության,

հանքային հավելույթ՝ ցեմենտի որոշակի որակական ցուցանիշներ ապահովելու նպատակով ցեմենտին ավելացվող նյութ,

ցեմենտային կլինկեր (K)՝ հատուկ հումքային բաղադրությամբ խառնուրդի թրծմամբ մինչև եռակալելն ստացված հիդրավիկ նյութ, որի զանգվածի առնվազն երկու երրորդը բաղկացած է կալցիումի սիլիկատներից ($3CaO \cdot xSiO_2$ և $2CaO \cdot xSiO_2$), իսկ մնացածը բաղկացած է այլումին և երկաթ պարունակող կլինկերային տարատեսակներից և այլ բաղադրամասերից:

CaO/SiO_2 զանգվածային հարաբերությունը պետք է լինի 2,0-ից ոչ պակաս: MgO զանգվածային մասը կլինկերում պետք է լինի կլինկերի զանգվածի 5 %-ից ոչ ավելի,

պուզոլան (P, Q)՝ սիլիկատային և (կամ) ալյումոսիլիկատային նյութեր, որոնք ըստ ծագման լինում են բնական կամ արդյունաբերական թափոններից, չունեն ինքնուրույն շաղկապման ունակություն, սակայն կալցիումի հիդրօքսիդի ($Ca(OH)_2$) առկայությամբ սովորական նորմալ պայմաններում դանդաղ ամրանում են՝ առաջացնելով կալցիումի հիդրոսիլիկատներ և ալյումինատներ: Ռեակցիոնասունակ սիլիկատների (SiO_2) զանգվածային մասը պետք է լինի զանգվածի 25 %-ից ոչ պակաս,

հատիկավորված դոմնային խարամ (S)՝ ստացվում է արագ սառեցնելով համապատասխան խարամի հավիածքը, որն առաջանում է դոմնային վառարանում թուջի հալեցումից, բաղկացած է առնվազն երկու երրորդով սպակե խարամից ($CaO + MgO + SiO_2$) և պատշաճորեն ակտիվացման դեպքում օժտված է հիդրավիկ հատկություններով,

վառելիքային մոխիր (V, W)՝ նյութ, որն ստացվում է փոշենման ածուխի այրման ընթացքում հեռացվող փոշեգազային խառնուրդից, փոշենման մասնիկների էլեկտրաստատիկ կամ մեխանիկական ընտրմամբ, որոնք լինում են սիլիկատաալյումինատային կամ սիլիկատակրային,

զլիեժ կամ թրծած շերտաքար (T)՝ բնական նյութերի բաղադրությունից և արտադրման գործընթացից կախված, հիմնականում երկկալցիումի սիլիկատ և միակալցիումի ալյումինատ տեսակի կլինկերային տարատեսակներ պարունակող այրվող շերտաքար,

միկրոսիլիկահող (L)՝ ոչ պակաս 85 % ամորֆ SiO_2 պարունակող հավելույթ,

կրաքար (LL)՝ նյութ, որում կալցիումի օքսիդի բաղադրությունից հաշվարկված կալցիումի կարբոնատի ($CaCO_3$) բաղադրությունը պետք է կազմի զանգվածի առնվազն 75 %-ը,

ցեմենտի խմբաքանակ՝ մեկ կազմակերպությունում նմանատիպ պայմաններում և նույն տեխնոլոգիայով արտադրված, մեկ տեսակի և ամրության դասի, մեկ ապրանքաուղեկից փաստաթղթով ձևակերպված որոշակի քանակի ցեմենտ:

(4-րդ կետը լրաց. 19.12.19 N 1838-Ն, փոփ. 18.05.23 N 771-Ն)

III. ՇՈՒԿԱՅԱՀԱՆՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ
(վերնագիրը փոփ. 18.05.23 N 771-Ն)

5. Արգելվում է Հայաստանի Հանրապետության տարածքում ցեմենտների, ցեմենտային կլինկերի արտադրությունը, փոխադրումը և իրացումն առանց համապատասխանության գնահատման:

(5-րդ կետը փոփ. 02.04.15 N 356-Ն, 03.06.21 N 902-Ն, փոփ., լրաց. 18.05.23 N 771-Ն)

6) Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխանության պարտադիր գնահատման ենթակա և շրջանառության մեջ գտնվող ցեմենտները, ցեմենտային կլինկերը պետք է ուղեկցվեն հայերեն մակնշմամբ, համապատասխանության ազգային նշանի մակնշմամբ, համապատասխանության սերտիֆիկատով:

(6-րդ կետը փոփ. 02.04.15 N 356-Ն, խմբ. 03.06.21 N 902-Ն, փոփ. 18.05.23 N 771-Ն)

IV. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

7. Ըստ սեղմման ամրության՝ ստանդարտ 28-օրական հասունացմամբ ցեմենտները բաժանվում են 22,5; 32,5; 42,5; 52,5 դասերի:

(7-րդ կետը փոփ. 03.06.21 N 902-Ն)

8. Ըստ սեղմման ամրության՝ վաղ 2 կամ 7 օրական հասունացմամբ յուրաքանչյուր դասի ցեմենտները, բացառությամբ 22,5 դասի ցեմենտների, բաժանվում են երկու ենթադասերի՝ նորմալ ամրացող (N) և արագ ամրացող (R)՝ սույն տեխնիկական կանոնակարգի N 2 աղյուսակին համապատասխան:

(8-րդ կետը փոփ. 03.06.21 N 902-Ն)

9. Ըստ նյութական կազմի՝ ցեմենտները դասակարգվում են հինգ հիմնական տեսակների՝

1) CEM I-պորտլանդցեմենտ,

- 2) CEM II-պորտլանդցեմենտ հանքային հավելույթներով (պորտլանդ - կոմպոզիցիոն ցեմենտ),
- 3) CEM III-խարամապորտլանդցեմենտ,
- 4) CEM IV-պուզոլանային ցեմենտ,
- 5) CEM V-կոմպոզիցիոն ցեմենտ:

Ըստ ցեմենտային կլինկերի և հավելույթների պարունակության՝ CEM II, CEM III, CEM IV և CEM V դասերը բաժանվում են A, B և C ենթատեսակների:

(9-րդ կետը փոփ. 18.05.23 N 771-Ն)

10. Ցեմենտների բաղադրությունը պետք է համապատասխանի N 1 աղյուսակով սահմանված նորմերին:

Աղյուսակ N 1

Ցեմենտի տեսակը	Ցեմենտի անվանումը	Ցեմենտի կրճատ նշագիրը	Ցեմենտի բաղադրությունը, % զանգվածից									օժանդակ բաղադրամասեր
			հիմնական բաղադրամասերը									
			պորտլանդցեմենտային կլինկեր	դոմնային խարամ	պուզոլան		վառելիքային մոխիր		գլիեթկամ թրծած շերտաքար	միկրոսիլիկահող	կրաքար	
K	S	P	Q	V	W	T	L	LL				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
CEM I	Պորտլանդցեմենտ	CEM I	95-100	-	-	-	-	-	-	-	-	-
CEM II	Պորտլանդցեմենտ խարամով	CEM II/ A-S	80-94	6-20	-	-	-	-	-	-	-	-
		CEM II/ B-S	65-79	21-35	-	-	-	-	-	-	-	-
	Պորտլանդցեմենտ պուզոլանով	CEM II/ A-P	80-94	-	6-20	-	-	-	-	-	-	-
		CEM II/ B-P	65-79	-	21-35	-	-	-	-	-	-	-
		CEM II/ A-Q	80-94	-	-	6-20	-	-	-	-	-	-
		CEM II/ B-Q	65-79	-	-	21-35	-	-	-	-	-	-
	Պորտլանդցեմենտ վառելիքային մոխիրով	CEM II/ A-V	80-94	-	-	-	6-20	-	-	-	-	-
		CEM II/ B-V	65-79	-	-	-	21-35	-	-	-	-	-
		CEM II/ A-W	80-94	-	-	-	-	6-20	-	-	-	-
		CEM II/ B-W	65-79	-	-	-	-	21-35	-	-	-	-
	Պորտլանդցեմենտ գլիեթով կամ թրծած շերտաքարով	CEM II/ A-T	80-94	-	-	-	-	-	-	6-20	-	-
		CEM II/ B-T	65-79	-	-	-	-	-	-	21-35	-	-
	Պորտլանդցեմենտ միկրոսիլիկահողով	CEM II/ A-L	80-94	-	-	-	-	-	-	-	6-20	-
		CEM II/ B-L	65-79	-	-	-	-	-	-	-	20-35	-
	Պորտլանդցեմենտ կրաքարով	CEM II/ A-LL	80-94	-	-	-	-	-	-	-	-	6-20
		CEM II/ B-LL	65-79	-	-	-	-	-	-	-	-	21-35

0-5

	Պորտլանդ կոմպոզիցիոն ցեմենտ	CEM II/ A-M	80-94	6-20							
		CEM II/ B-M	65-79	21-35							
CEM III	Խարամապրու-լանդցեմենտ	CEM III/ A	35-64	36-65	-	-	-	-	-	-	-
		CEM III/ B	20-34	66-80	-	-	-	-	-	-	-
		CEM III/ C	5-19	81-95	-	-	-	-	-	-	-
CEM IV	Պորտլանային ցեմենտ	CEM IV/ A	65-89	-	11-35			-	-	-	
		CEM IV/ B	45-64	-	36-55			-	-	-	
CEM V	Կոմպոզիցիոն ցեմենտ	CEM V/ A	40-64	18-30	18-30		-	-	-	-	
		CEM V/ B	20-38	31-50	31-50		-	-	-	-	

11. Ցեմենտի պայմանական նշագրումը պետք է պարունակի՝
 ցեմենտի անվանումը՝ ըստ սույն տեխնիկական կանոնակարգի N 1 աղյուսակի,
 ցեմենտի կրճատ նշագիրը՝ ըստ սույն տեխնիկական կանոնակարգի N 1 աղյուսակի,
 ցեմենտի ամրության դասը՝ ըստ սույն տեխնիկական կանոնակարգի 7-րդ կետի,
 ցեմենտի ամրության ենթադասը՝ ըստ սույն տեխնիկական կանոնակարգի 8-րդ կետի:

12. Ցեմենտների ֆիզիկամեխանիկական ցուցանիշները պետք է համապատասխանեն N 2 աղյուսակով սահմանված նորմերին:

Աղյուսակ N 2

Ամրության դասը	Ծրման ամրությունը, ՄՊա/ ոչ պակաս (28 օր հասունացմամբ)	Սեղմման ամրությունը, ՄՊա, օր հասունացմամբ				Կապակցումը			Ծավալի փոփոխման հավասարաչափությունը (ընդարձակում), մմ, ոչ ավելի
		վաղ ամրություն		ստանդարտ ամրություն	սկիզբը, ընդ շուտ	սկիզբը, ոչ ուշ	վերջը, ոչ ուշ		
		2 օրական, հասունացում, ոչ պակաս	7 օրական հասունացում, ոչ պակաս	28 օրական հասունացում ոչ ավելի					
1	2	3	4	5	6	7	8	9	10
22.5N	-	-	11.0	22.5	42.5	45	-	10	10
32.5N	5.5	-	16.0	32.5	52.5	45	-	10	
32.5R	5.5	10.0	-			-	45	10	
42.5N	6.0	10.0	-	42.5	62.5	45	-	10	
42.5R	6.0	20.0	-			-	45	10	
52.5N	6.5	20.0	-	52.5	-	45	-	10	
52.5R	6.5	30.0	-			-	45	10	

Ցեմենտի աղացվածքի մանրությունը N 008 մաղի վրայի մնացորդը	ոչ ավելի, քան 15 %
Ցեմենտներում տեսակարար մակերեսը՝ համաձայն Բլեյնի մեթոդի	ոչ պակաս, քան 2800 սմ ² /գ և ոչ ավելի, քան 4000 սմ ² /գ

(աղյուսակը խմբ. 03.06.21 N 902-Ն, 18.05.23 N 771-Ն)

(12-րդ կետը խմբ. 03.06.21 N 902-Ն, 18.05.23 N 771-Ն)

13. Ցեմենտների քիմիական ցուցանիշները պետք է համապատասխանեն N 3 աղյուսակով սահմանված նորմերին, իսկ ցեմենտային կլինկերի քիմիական ցուցանիշները պետք է համապատասխանեն N 4 աղյուսակով սահմանված նորմերին:

Աղյուսակ N 3

--

Ցուցանիշի անվանումը	Ցեմենտի տեսակը	Ցեմենտի ամրության դասը	Ցուցանիշը, %
Զանգվածի կորուստը շիկացման ժամանակ, ոչ ավելի	CEM I CEM III	բոլոր դասերը	5,0
Չլուծվող մնացորդ, ոչ ավելի	CEM I CEM III	բոլոր դասերը	5,0
Ցեմենտում ծծմբի օքսիդի (VI) SO ₃ զանգվածային մասը	CEM I CEM II CEM IV CEM V	22,5N 32,5N 32,5R 42,5N	1,5-3,5
		42,5R 52,5N 52,5R	1,5-4,0
	CEM III	բոլոր դասերը	
Ցեմենտում քլոր-իոնի (Cl ⁻) զանգվածային մասը, ոչ ավելի	բոլոր տեսակները	բոլոր տեսակները	0,1

(աղյուսակը փոփ. 19.12.19 N 1838-Ն)

Աղյուսակ N 4

Ցեմենտային կլինկերում ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի նորմը (%)
Զանգվածի կորուստը շիկացման ժամանակ, ոչ ավելի	5,0
Չլուծվող մնացորդ, ոչ ավելի	5,0
CaO	Չի նորմավորվում
ազատ CaO պարունակությունը, ոչ ավելի	1
MgO պարունակությունը ոչ ավելի	5
Al ₂ O ₃	Չի նորմավորվում
Fe ₂ O ₃	Չի նորմավորվում

(աղյուսակը լրաց. 03.06.21 N 902-Ն, փոփ. 18.05.23 N 771-Ն)

(13-րդ կետը փոփ. 19.12.19 N 1838-Ն, խմբ., լրաց. 03.06.21 N 902-Ն, փոփ. 18.05.23 N 771-Ն)

14. CEM III տեսակի ցեմենտներում քլոր-իոնի պարունակությունը կարող է լինել 0,1 %-ից ավելի: Այդ դեպքում քլոր-իոնի պարունակությունը պետք է նշված լինի փաթեթավածքի վրա և ապրանքատուղեկից փաստաթղթում:

15. Ցեմենտի որակի մակարդակի համապատասխանության հավաստումը պետք է իրականացվի ԳՕՍՍ 31108 «Ցեմենտներ համաշխարհային. Տեխնիկական պայմաններ» ստանդարտի 7-րդ բաժնով սահմանված պահանջներին համապատասխան:

(15-րդ կետը փոփ. 18.05.23 N 771-Ն)

V. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

(վերնագիրը լրաց. 03.06.21 N 902-Ն)

16. Ցեմենտներում բնական ռադիոնուկլիդների տեսակարար արդյունավետ A_{ԷԳ} ակտիվությունը պետք է լինի 370 Բկ/կգ-ից ոչ ավելի:

17. Ցեմենտի արտադրության, փոխադրման, փաթեթավորման, իրացման և պահման ժամանակ աշխատանքային գոտում մարդու կյանքի և առողջության անվտանգությանը ներկայացվող պահանջները սահմանվում են պետական գրանցում ստացած (16.05.2005 թ. թիվ 10009372) «Աշխատանքի հիգիենիկ դասակարգումը՝ ըստ արտադրական միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների, աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության ցուցանիշների» ՍՆ N 2.2-002-05 սանիտարական կանոններով և նորմերով:

(17-րդ կետը փոփ. 18.05.23 N 771-Ն)

17.1. Ցեմենտների մեջ արգելվում է ավելացնել օժանդակ բաղադրիչներ, հատուկ կամ տեխնոլոգիական հավելումներ, որոնք կարող են նվազեցնել ցեմենտի որակական հատկանիշները:

(17.1-ին կետը լրաց. 03.06.21 N 902-Ն)

**VI. ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄԸ, ՓՈԽԱԴՐՈՒՄԸ
(վերնագիրը լրաց., փոփ. 03.06.21 N 902-Ն)**

18. Ցեմենտները, ցեմենտային կլինկերը փոխադրում են տրանսպորտի բոլոր տեսակի միջոցներով՝ ըստ տվյալ տեսակի տրանսպորտային միջոցով բեռների փոխադրման կանոնների՝ փաթեթավորված վիճակում կամ առանց դրա:
(18-րդ կետը փոփ. 03.06.21 N 902-Ն, 18.05.23 N 771-Ն)

19. Փաթեթավորված ցեմենտները, ցեմենտային կլինկերը փոխադրվում է ունիվերսալ տրանսպորտային միջոցներով (ծածկված վագոններով, ավտոմեքենաներով և այլն), տրանսպորտային փաթեթներով, կոնտեյներներով կամ պարկերով: Տրանսպորտային փաթեթի նետոտ-զանգվածը պետք է լինի 2000 կգ - ից ոչ ավելի: Պարկի քաշը ցեմենտների, ցեմենտային կլինկերի հետ միասին չպետք է գերազանցի 50 կգ-ը, ցեմենտի միջին զանգվածի թույլատրելի բացասական շեղումը փաթեթում նշված զանգվածի մեջ չպետք է լինի ավելի, քան գտաքաշի -1 %-ը:
(19-րդ կետը փոփ. 03.06.21 N 902-Ն, 18.05.23 N 771-Ն)

20. Առանց փաթեթավածքի փոխադրման ժամանակ ցեմենտները և ցեմենտային կլինկերը պետք է բեռնառաքվեն հատուկ նշանակության փոխադրամիջոցներով (հատուկ սարքավորված մեքենաներ, ավտոցեմենտատարներ, ցեմենտատար վագոններ, նավեր):
(20-րդ կետը խմբ. 03.06.21 N 902-Ն, փոփ. 18.05.23 N 771-Ն)

21. Ցեմենտների և ցեմենտային կլինկերի յուրաքանչյուր խմբաքանակ պետք է ուղեկցվի ապրանքաուղեկից փաստաթղթով, որտեղ պետք է նշված լինեն հետևյալ տվյալները՝

- 1) արտադրող կազմակերպության անվանումը, ապրանքային նշանը և հասցեն.
- 2) արտադրանքի պայմանական նշագիրը կամ լրիվ անվանումը.
- 3) խմբաքանակի համարը և բեռնառաքման ամսաթիվը.
- 4) արտադրանքում հանքային հավելույթների տեսակը և քանակը.
- 5) արտադրանքի ամրության դասը.
- 6) արտադրանքի երաշխիքային ժամկետը.
- 7) փաթեթավածքում արտադրանքի գտաքաշը,
- 8) բնական ռադիոնուկլիդների տեսակարար արդյունավետ $A_{\alpha\beta}$ ակտիվությունը.
- 9) փոխադրամիջոցի համարանիշը.
- 10) համապատասխանության գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը.
- 11) համապատասխանության ազգային նշանը և նորմատիվ փաստաթղթի նշագիրը, որի համաձայն արտադրվել է արտադրանքը:

(21-րդ կետը փոփ. 02.04.15 N 356-Ն, խմբ. 03.06.21 N 902-Ն, փոփ. 18.05.23 N 771-Ն)

22. Փաթեթավորման համար օգտագործում են 5 կամ 6 շերտանի կարված կամ սոսնձված թղթապարկեր, անջրանցիկ ներդիրով փափուկ կոնտեյներներ կամ այլ խոնավությունից և աղտոտումից ցեմենտները, ցեմենտային կլինկերը հուսալիորեն պաշտպանող փաթեթավածք:
(22-րդ կետը փոփ. 03.06.21 N 902-Ն, 18.05.23 N 771-Ն)

23. Ցեմենտները, ցեմենտային կլինկերը պետք է պահվեն առանձնացված՝ ըստ տեսակների և ամրության դասերի, առանց փաթեթավածքի սխիւններում կամ այլ փակ տարողություններում, իսկ փաթեթավորված վիճակում՝ չոր շինություններում: Չի թույլատրվում տարբեր տեսակների և դասերի ցեմենտների, ցեմենտային կլինկերի խառնումը, ինչպես նաև աղտոտումը կողմնակի խառնուկներով և խոնավացումը:

Չի թույլատրվում առանց փաթեթավածքի ցեմենտների, ցեմենտային կլինկերի պահումն ամբարային տիպի պահեստներում:

(23-րդ կետը փոփ. 03.06.21 N 902-Ն, 18.05.23 N 771-Ն)

24. Պահման ժամանակ ցեմենտի պարկերը դասավորում են հատուկ տակդիրների վրա՝ 1,8 մ-ից ոչ ավելի բարձրության վրա:

25. Արտադրողը պետք է երաշխավորի ցեմենտի համապատասխանությունը սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին, դրա փոխադրման և պահման կանոնների պահպանման դեպքում, բայց ոչ ավելի, քան 60 օրվա ընթացքում սկսած բեռնառաքման օրվանից:

**VII. ՄԱԿՆՇՈՒՄԸ
(վերնագիրը լրաց., փոփ. 03.06.21 N 902-Ն)**

26. Պարկերով փաթեթավորված ցեմենտի մակնշումը կատարվում է յուրաքանչյուր պարկի վրա՝ ցանկացած մասում: Փափուկ կոնտեյներով փաթեթավորված ցեմենտի մակնշումը կատարվում է պիտակի վրա, որը ներդրվում է փափուկ կոնտեյների վրա գտնվող հատուկ զրպանի մեջ:

27. Մակնշումը պետք է լինի պարզ և դյուրընթեռնելի և պարունակի հետևյալ տվյալները՝
- ա) արտադրող կազմակերպության անվանումը և ապրանքային նշանը,

- բ) ցեմենտի պայմանական նշանագիրը և (կամ) լրիվ անվանումը,
- գ) ցեմենտի սեղմման ամրության դասը,
- դ) արտադրման տարեթիվը, ամիսը,
- ե) փաթեթվածքում ցեմենտի գտաքաշը,
- զ) համապատասխանության գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը:

(27-րդ կետը փոփ. 02.04.15 N 356-Ն)

28. Յուրաքանչյուր տրանսպորտային միջոց (այդ թվում՝ առանց փաթեթավորման փոխադրման դեպքում) պետք է ուղեկցվի համապատասխան պիտակով, որտեղ նշվում են սույն տեխնիկական կանոնակարգի 27-րդ կետում սահմանված բոլոր տեղեկությունները, ինչպես նաև ցեմենտի խմբաքանակի համարը և առաքման ամսաթիվը: Պիտակն ամրացվում է տրանսպորտային միջոցին, մատչելի տեղում՝ փոխադրման ժամանակ պիտակի պահպանվածությունն ապահովող ցանկացած ձևով:

Ցեմենտի փաթեթվածքի վրա պետք է նշված լինի «Պահպանել խոնավությունից» նշանը՝ սույն տեխնիկական կանոնակարգի VIII բաժնում նախատեսված բեռների մակնշման ստանդարտին համապատասխան:

VIII. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ
(վերնագիրը փոփ. 02.04.15 N 356-Ն, 03.06.21 N 902-Ն)

29. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին ցեմենտների, ցեմենտային կլինկերի խմբաքանակի կամ սերիական արտադրության համար համապատասխանությունը հավաստելու համար հայտատուն՝

- 1) պետք է կիրառի Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված սերտիֆիկացման ընթացակարգերը խմբաքանակի կամ սերիական արտադրության համար.
- 2) պետք է դնի Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 14-ի N 337-Ն որոշմամբ սահմանված համապատասխանության ազգային նշանը ցեմենտների, ցեմենտային կլինկերի փաթեթի կամ պիտակի վրա, իսկ գործընթացների համար՝ նաև օգտագործվող գովազդային նյութերում:

(29-րդ կետը խմբ. 02.04.15 N 356-Ն, փոփ. 19.12.19 N 1838-Ն, խմբ. 03.06.21 N 902-Ն, փոփ. 18.05.23 N 771-Ն)

- 30. **(կետն ուժը կորցրել է 18.05.23 N 771-Ն)**
- 31. **(կետն ուժը կորցրել է 18.05.23 N 771-Ն)**
- 32. **(կետն ուժը կորցրել է 18.05.23 N 771-Ն)**
- 33. **(կետն ուժը կորցրել է 18.05.23 N 771-Ն)**

34| Սերիական արտադրության համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետի ընտրությունը կատարվում է ըստ իրականացված համապատասխանության գնահատման ընթացակարգի, բայց 3 տարվանից ոչ ավելի: Խմբաքանակի համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետի ընտրությունը կատարվում է ըստ արտադրման ժամկետի, բայց ոչ ավելի, քան պիտանիության ժամկետն է:

(34-րդ կետը խմբ. 02.04.15 N 356-Ն, 03.06.21 N 902-Ն)

35. **(կետն ուժը կորցրել է 18.05.23 N 771-Ն)**

36. Համապատասխանության հսկողության արդյունքների հիման վրա սերտիֆիկացում իրականացրած համապատասխանության գնահատման նշանակված մարմինն իրավունք ունի պահպանելու իր կողմից տրված համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը կամ այն կասեցնելու կամ դադարեցնելու:

(36-րդ կետը խմբ. 02.04.15 N 356-Ն)

37. Համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում սերտիֆիկացում իրականացրած համապատասխանության գնահատման նշանակված մարմինը դրա մասին տեղեկացնում է հայտատուին, արտադրողին և գրավոր ծանուցում է պետական վերահսկողություն իրականացնող մարմիններին:

(37-րդ կետը խմբ. 02.04.15 N 356-Ն, փոփ. 03.06.21 N 902-Ն)

IX. ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ
(վերնագիրը փոփ. 03.06.21 N 902-Ն)

38. Ցեմենտների, ցեմենտային կլինկերի չափումների միասնականության ապահովումը պետք է իրականացվի «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
(38-րդ կետը փոփ. 03.06.21 N 902-Ն, 18.05.23 N 771-Ն)

X. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ
(վերնագիրը փոփ. 03.06.21 N 902-Ն)

39. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին ցեմենտների, ցեմենտային կլինկերի

համապատասխանության պետական վերահսկողությունն իրականացվում է «Տեխնիկական կանոնակարգման մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

(39-րդ կետը փոփ. 03.06.21 N 902-Ն, փոփ., լրաց. 18.05.23 N 771-Ն)

XI. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ
(վերնագիրը փոփ. 03.06.21 N 902-Ն)

Ստանդարտների նշագիրը և կետերը	Պահանջներ և փորձարկման մեթոդներ սահմանող ստանդարտի անվանումը
ԳՕՍՏ 5382	Ցեմենտներ և ցեմենտի արտադրության նյութեր. Քիմիական անալիզի մեթոդներ
ԳՕՍՏ 14192	Մակնշում բեռների
ԳՕՍՏ 25094	Հավելյալներ ակտիվ հանքային ցեմենտների համար. Փորձարկման մեթոդներ
ԳՕՍՏ 30108	Նյութեր և շինվածքներ շինարարական. Բնական ճառագայթաակտիվ նուկլիդների տեսակարար արդյունավետ ակտիվության որոշումը
ԳՕՍՏ 30744	Ցեմենտներ. Փորձարկման մեթոդներ բազմաֆրակցիոն ավազի օգտագործմամբ
ԳՕՍՏ 30515	Ցեմենտներ. Ընդհանուր տեխնիկական պայմաններ
ԳՕՍՏ 31108	Ցեմենտներ համաշինարարական. Տեխնիկական պայմաններ

(ցանկը լրաց. 18.05.23 N 771-Ն)

(հավելվածը փոփ., խմբ. 02.04.15 N 356-Ն, լրաց., փոփ. 19.12.19 N 1838-Ն, լրաց., փոփ., խմբ. 03.06.21 N 902-Ն, 18.05.23 N 771-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան